

«ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ» ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅՈՒ ՓՈՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ

Գրիգորյան Գ. (ԵՊՀ, Հայաստան)

grigoryan1989@gmail.com

Բանալի բառեր՝ հնատիպ գիրք, Հարություն Վաղարշապատցի, Խաչելություն, փորագիր պատկեր:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով 1771 թ. էջմիածնում հիմնված տպարանը համարձակ ու առաջադեմ քայլ էր պատմական տվյալ ժամանակաշրջանի համար: Հնատիպ գրքի սահմանը համարելով 1800 թվականը՝ նկատում ենք, որ հայոց հողի վրա ստեղծված հնատիպ գրքերի թիվը 13-ն է, որոնց փորագիր պատկերների և առանձին զարդամոտիվների (ճակատագարդեր, վերջագարդեր, լուսանցագարդեր, զարդագրեր, զարդաշրջանակներ և այլն) հեղինակը Հարություն Վաղարշապատցին է: Այդ մասին տեղեկանում ենք նշյալ գրքերի հիշատակարաններից, որտեղ փորագրող-նկարչին հանդիպում ենք նաև հետևյալ անուններով՝ «Յարութին էջմիածնեցի (էջմիածնցի)», «վարդապետ Յարութին», «վարպետ Յարութին»:

Տաղանդավոր այդ վարպետի արվեստին մինչ այժմ հավուր պատշաճի անդրադարձ չի եղել, մինչդեռ վերջինիս ավանդը հայ գրատպության, հնատիպ գրքի, մասնավորաբար էջմիածնական հրատարակությունների գեղարվեստական հարդարման մեջ բավական մեծ է: Սույն զեկուցման մեջ ներկայացնում ենք միայն «Խաչելություն» տեսարանի պատկերագրությունը՝ միաժամանակ կարևորելով հետագայում համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որը կարող է նոր խոսք լինել հայ հնատիպ գրքի գեղարվեստական հարդարման ուսումնասիրության հարցում:

Հարություն Վաղարշապատցի փորագրող-նկարչից ունենք «Խաչելության» տեսարանը ներկայացնող չորս պատկերներ՝ վեց հնատիպ գրքերում: Առաջինը հանդիպում ենք Տոնացույցում (1774-1775 թթ.), երկրորդ փորագիր պատկերը տեսնում ենք երեք տարբեր գրքերում՝ Ժամագրքում (1785 թ.), Սաղմոսարանում (1787 թ.) և Շարակնոցում (1789 թ.), երրորդը՝ կրկին Սաղմոսարանում, չորրորդը՝ Խորհրդատետրում (1788 թ.): Հատկանշական է, որ Հարությունի բոլոր պատկերներում (ոչ միայն «Խաչելության» տեսարանում) առկա է ակնհայտ նմանություն մինչ այդ տպագրված հայկական գրքերի պատկերների հետ, որոնք կրում են եվրոպական արվեստի ուժեղ ազդեցությունը. կարելի է ենթադրել, որ վերջինս կրթություն է ստացել եվրոպայում կամ էջմիածնում տեսել է մինչ այդ եվրոպայում տպագրված հայկական գրքերի պատկերները և ազդվել դրանց պատկերագրությունից, ինչն առավել հավանական ենք համարում: Որպես օրինակ առանձնացնենք Լիվոռնոյում 1670 թ. տպված «Վարդապետութիւն քրիստոնէական» գրքի «Խաչելության» պատկերը. որևէ կասկած չկա, որ Հարությունը տեսել է այդ պատկերը և արտանկարել այն վերը հիշատակված երեք գրքերում, միայն թե՛ էջմիածնական հրատարակությունն աչքի է ընկնում իր նրբությամբ, գծերի հստակությամբ:

Չորս պատկերներն էլ պատկերագրական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Խաչված Քրիստոսից բացի, չորս փորագիր պատկերներում կարելի է գտնել «Խաչելության» տեսարանին վերաբերող բազմաթիվ մանրամասներ՝ Մարիամի, Հովհաննեսի, ողբացող կանանց, երկու ավազակների, Քրիստոսի կողը նիզակով խոցող ձիավոր զինվորի (Լոնգինես), հրեշտակի պատկերները, ինչպես նաև Գողգոթան և դրա հիմքում՝ Ադամի գանգը, խաչի վրայի տախտակը՝ «ՅՆԹՀ» կամ «INRI» մակագրությամբ, փշե պսակը, երկնային լուսատուները, թասը, որի մեջ թափվում է խոցված կողից

թափվող արյունը (Հաղորդության խորհրդանիշ): Այնտեղ, որտեղ առկա է Ադամի գանգը, թասը պատկերված չէ: Բոլոր պատկերներում արտահայտված են նաև խաչելության ժամանակ տեղի ունեցած բնության փոփոխությունները:

Վաղարշապատցու «խաչելության» մեջ չենք տեսնում Հին և Նոր Կտակարանները խորհրդանշող սինագոգի և եկեղեցու (էկլեսիա) պատկերները, Ադամի գանգի հետ պատկերվող օձը (երբեմն խնձորով), չարչարանքի զենքերն ու իրերը, Երուսաղեմի տաճարը, ինչպես նաև զինվորներից երկրորդի՝ Ստեֆատոսի պատկերը, բացակայում է նաև հոծ բազմության (հրեաների և հռոմեացիների) տեսարանը և մի շարք այլ մանրամասներ:

THE ICONOGRAPHY OF “CRUCIFIXION” IN THE WOODCUTS OF HARUTYUN

VAGHARSHAPATCI

Grigoryan G. (Yerevan State University, Armenia)